

Ուժի մեջ է՝ 01.09.2020թ.

Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում այլ բանկի վճարային քարտի կցման պայմաններ և սակագներ

1. Ինեկո օնլայն/մոբայլ համակարգում հնարավոր է կցել ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող բանկերի կողմից թողարկված ArCa, Master, Visa տեսակի ցանկացած վճարային քարտ:
2. **Կցված քարտի միջոցով հնարավոր է կատարել հետևյալ գործարքները¹**
 - **փոխանցում իր հաշիվներին՝** Կցված քարտից հնարավոր է կատարել փոխանցում Ինեկոբանկում սեփական դրամային հաշիվներին
 - **փոխանցում քարտին՝** Կցված քարտից հնարավոր է կատարել փոխանցում Ինեկոբանկի կողմից թողարկված, ինչպես նաև ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին
 - **ներբանկային փոխանցում՝** Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների դրամային հաշիվներին
 - **ԻնեկոՇնկեր փոխանցում՝** Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների նրա բջջային հեռախոսը կամ էլ. փոստի հասցեն մուտքագրելու միջոցով
 - **ԻնեկոՓեյ փոխանցում՝** Կցված քարտից հնարավոր է կատարել ՀՀ դրամով փոխանցում Ինեկոբանկի այլ հաճախորդների՝ QR կոդի սքանավորման միջոցով
 - **ԻնեկոՓեյ վճարում՝** Կցված քարտից հնարավոր է կատարել անկանխիկ վճարում՝ QR կոդի սքանավորման միջոցով
 - **Պարբերական վճարումներ՝** Հանձնարարել Բանկին կատարել պարբերական փոխանցումներ/վճարումներ կցված քարտից

3. Կցված քարտի միջոցով կատարված գործարքների համար կիրառվում են հետևյալ սակագները

Գործառնության տեսակ	Սակագին ²
Քարտի կցում	Անվճար ³

¹Նշված գործարքների հասանելիությունը կախված է հաճախորդի հաշվի պայմաններով սահմանված հնարավորություններից:

² Անկախ սույն սակագներով սահմանված վճարներից կցվող քարտի թողարկող բանկի կողմից կարող են գանձվել վճարներ՝ համաձայն տվյալ քարտի պայմանների և սակագների:

³ Քարտ կցելիս տվյալ քարտից կգանձվի 5 ՀՀ դրամ, որը կփոխանցվի հաճախորդի ընթացիկ հաշվին:

Կցված քարտի հեռացում	Անվճար
Ինեկոֆեյ վճարում	Անվճար
Պարբերական վճարումներ	Անվճար ⁴
Փոխանցում քարտին ⁵	1.5%
Փոխանցում իր հաշիվներին ⁶	<ul style="list-style-type: none"> • Անվճար, եթե օրացույցային ամսվա ընթացքում հաճախորդի կցված բոլոր քարտերով կատարված գործարքների հանրագումարը չի գերազանցում 50,000 ՀՀ դրամը, • 1.5%՝ օրացույցային ամսվա ընթացքում հաճախորդի կցված բոլոր քարտերով կատարված գումարային 50,000 ՀՀ դրամը գերազանցող գործարքների համար:
Ներբանկային փոխանցում ⁶	
ԻնեկոԸնկեր փոխանցում	
ԻնեկոՓեյ փոխանցում	

4. Արտարժույթային վճարային քարտով փոխանցում/վճարում կատարելու դեպքում գործարքը տեղի է ունենում ՀՀ դրամով, իսկ փոխարկման փոխարժեքը սահմանվում է համաձայն կցված քարտը թողարկող բանկի համապատասխան պայմանների և սակագների:
5. Հաճախորդը միաժամանակ կարող է կցած ունենալ առավելագույնը 5 վճարային քարտ:

⁴Պարբերական վճարման հանձնարարականով նախատեսված գործառնության համար կգանձվի համապատասխան վճար՝ սույն սակագներով նախատեսված լինելու դեպքում:

⁵ Փոխանցում ArCa համակարգի միջոցով հավաստագրում տրամադրող այլ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերին *Փոխանցում քարտին* ծառայության միջոցով: *Փոխանցում քարտին* ծառայության այլ պայմանները կարգավորվում են համաձայն «Ինեկո Օնլայն/Մոբայլ համակարգում փոխանցում քարտին ծառայության պայմաններ և սակագներ» փաստաթղթի:

⁶ Այդ թվում *Փոխանցում քարտին* ծառայության միջոցով Ինեկոբանկի կողմից թողարկված վճարային քարտերին կատարված փոխանցումներ: